ԵՐԿՈՒ ՀՐԷՇ

Ա.

Գո՛նդ, պոռոտախօս վարձկան գրչակներ,
Հայ խմբագրութեան խաւար կանթեղներ!
Ձեր դափնիները ձեզ համար պահե՛ք,
Ձեր գովասանքը չեմ ուզում երբեք:
Թողե՛ք եւ շպիրտ ձեր հայհոյանքը,
Գլուխ-ծոսական ձեր բարբանջանքը!
Ձեր դատաստանը պէտք չէ պօէտին.
Նա ձեզ համար չէ երգում բընաւին:—
Ցասնվանկեանի այս ոտանաւոր,
Որ հին զրոյց է, սակայն յանգաւոր,
Հայ ժողովրդի համար եմ գրում,
Ոչ ձեր ժողովրդի համար եմ պատմում.

Բ.

Օ, համեստափայլ քնքոյշ տիկիններ,
Հայոց աշխարհի չքնաղ հիւրիներ!
Թո՛ղ չըմռայլի ձեր հոգին անբիծ
Այս պապենական անմեղ զրոյցից:
Այստեղ ես բնաւ ձե՛զ չեմ անարգում,—
Ձեր հիւանդ քրոջ կեանքն եմ պատմում...
Այո, հիւանդ էր նա վարք ու բարքով,
Իսպառ այլանդակ, զազիր իր հոգով:

Նա այնքան նենգ էր, գոռոզ, լեզուանի,
Որ Աստուած ձեզնից թող հեռու տանի!
Նա նախատինք էր գեղեցիկ սեռի,
Նա նենգամիտ էր, իբրև չար փերի։

Գ

Նորա խեղճ մարդն էլ հանգիստ չ'ունէր։—
Ամեն օր կռիւ, անվերջ անէծքներ,
Ամեն օր աղմուկ, հայհոյանք, յիշոց,
Վիրաւորանքներ և տուրուդըմբոց
Անպակաս էին միշտ նորա տանը։
Եւ ճնշուած, նեղուած մեր շինականը
Զը գիտէր՝ թէ ինչ հողը տար գլխին,—
Կեանքը ծանր էր, ծանր, դառնագին։
Արդեօք ուր փախչի իր կնոջ ձեռքից?
Ինչպէս ազատուի նա այն հըրէշից?
Նա մտածում էր, անվերջ մտածում,
Բայց ազատուելու հնար չէր գտնում։

Դ

Հին ժամանակն էր նահապետական—
Ոչ ազատ կամք կար, ոչ ապահարզան։
Միայն մահն էր կարող անջատել,
Մարդուն կնոջից յաւէրժ բաժանել։
Բայց դժբաղդաբար մահը չէր գալիս
Ու շինականի կեանքին վերջ տալիս.
Ա՜խ, այն հրէշի հետ ինչու պսակուեց,
Ինչու իւր կեանքը նորա հետ կապեց?
Եւ ո՞ր անգութը գլորեց նորան
Աղէտի ծովը, ծովը դառնութեան?
Ո՞ր չարանենգը թըշուառացրեց,
Վշտի անդունդը նորան տապալեց?

Ե

Ոչ ոք — ոչ խարդախ մօցիքուլները,

Ոչ էլ բռնակալ, խիստ ծնողները...
Եւայի դստեր աչերն էին
Դրժոխքը ձգել խեղճ շինականին.
Գոհար, հրապուրիչ, սակայն ահաւոր,
Աչերն էին միայն մեղաւոր...
Պաղ աղբիւրի մօտ տեսել էր հեռուից
Զքնաղ գեղջկուհուն, նորա աչերից
Դիւթուել, հըմայուել... Ում մտքով կ'անցնէր,
Որ այդ երկնային, գեղատես պատկեր
Իր չքնաղութեան դիւթիչ քօղի տակ
Ունի զազրելի հոգի այլանդակ?

Զ

Բացուեցաւ այգը։ Լեռների ետև
Ահա երևաց ոսկեփայլ արև,
Կարմիր բոցերով երկինքը պատեց,
Շքեղ բնութիւնն քնից զարթեցրեց։
Կանաչ անտառը մեղմիկ հովերից
Խշշում է հանդարտ, խշշում քաղցրալից։
Եւ կանաչազարդ լեռների լանջում
Հօտերն էին սողոսկում, մայում։
Եւ շքեղ գարնան դիւթիչ հրապոյրներ,
Կեանքի քաղցրութիւն, կեանքի վայելքներ
Զեն թովում բնաւ հեգ շինականին —
Դառն վիշտն է լոկ նորա բաժին։

Է

Երկնաբերձ լեռան կանաչ լանջի տակ
Մշուշով պատած անդունդ կար անտակ,
Որ բացած մռայլ բերանն ահաւոր,
Կարծես՝ ուզում էր կուլ տալ սար ու ձոր։
Եւ զարհուրելի անդունդի խորքում
Մի ահռելի հրէշ էր բնակւում.
Մերձակայ գիւղի բնակիչներին
Լափել էր արդէն, շէնը հիմնովին

Քաջուքանդ արել, կործանել իսպառ
Ու ինքը մտել անդունդը խաւար
Հանգստանալու. քնած էր այնտեղ
Մարդկային ազգի թշնամին ահեղ։

Ը

Եւ ահըռելի անդունդի եզրին՝
Հեգ շինականը՝ նստած լալագին՝
Դառն ողբում էր, անվերջ հառաչում,
Իր սև ու տարտամ կեանքն անիծում։
Իր գարշ կենակցից հալածուած իսպառ՝
Փախել էր անից, ընկել սար ու քար,
Որ այստեղ՝ հեռու մարդկանց աչքերից՝
Անձնատուր լինի վշտին դառնալից։
Սակայն այստեղ էլ հանգիստ չըգտաւ—
Այլանդակ կինը յանկարծ յայտնուեցաւ,
Փրփուրը բերնին, կատղած, մոլեգնած,
Ահեղ աչքերը արիւնակալած...

Թ

Սոսկաց գիւղացին... Նա կամենում էր
Փախչել, ազատուել, բայց արդէն ուշ էր—
Նա զգաց իրան կընոջ ճիրանում...
Եւ շինականի բորբոքուած սրտում
Խառնուեցին իրար՝ վիշտ ու սարսափանք,
Ցուսահատութիւն, զայրոյթ ու տանջանք.
Խելագարի պէս ցնցուեց, տատանուեց,
Գարշելի կընոջ անդունդը գլորեց...
Նողկալի կինը մռնչաց ուժգին,
Անտակ ու խաւար անդունդի միջին
Արտաւազդի պէս՝ չքացաւ իսպառ...
Եւ ահեղ ձայնից որոտաց աշխարհ։

Ժ

Անդունդի խորքում կինը բանտարկուած՝

Փեսաւում էր վարսը, վազվզում կատղած,
Ցածից իր մարդուն անէծք ուղարկում,
Գերուած վագրի պէս՝ ուժգին մռնչում.
Նա չանկռտում էր լերկ ապառաժներ,
Ուզում էր ցատկել, թռչել դէպի վեր,
Իր տապալողին գցել ոտի տակ,
Ջախջախել նորան, անել նահատակ.
Բայց նորա ջանքն ունայն էր անցնում—
Անդունդը խորն էր՝ ելնել չէր կարում.
Եւ նա գոչում էր, մռնչում կրկին,
Անդունդի խորքը թնդացնում ուժգին...

ԺԱ

Եւ դաժան կընոջ գոռում-գոչումից
Հրէշը սարսափած զարթնեց իր քնից։
Այն հզօր, հուժկու հրէշն ահաւոր,
Որից սոսկում են մարդիկ բիւրաւոր,
Որը ժայռեր է խորտակում, փշրում,
Որը գետեր է խմում, ցամքեցնում,
Որը կլանում է անհամար զոհեր
Ու հիմնայատակ կործանում գիւղեր,—
Զգաց երկիւղը առաջին անգամ,
Այն էլ՝ կնոջից լիրբ ու անզգամ՝
Նա զգաց, որ կայ աւելի հզօր,
Իրանից հուժկու, հրէշ ահաւոր։

ԺԲ

Մարդկային աղգի ահեղ թշնամին
Երկար չըմնաց անդունդի միջին։
Դաժան կնոջից սարսափած իսպառ՝
Սպասում էր նա բոպէի յարմար,
Որ իր խոր բնից մի կերպով փախչի,
Լոյս աշխարհ դուրս գայ, ազատ շունչ քաշի...
Ցանկարծ անդունդը ուժգին դղրդաց,
Եւ նորա միջից ահա զարհուրած՝

Հրեշը դուրս ցատկեց, թռաւ, բարձրացաւ,
Ամպերի միջին անհետ չքացաւ...
Դրսից այդ տեսաւ մեր շինականը,
Իսկոյն հասկացաւ՝ ինչումն է բանը...

ԺԳ

Եւ նա մատանջ, մոլոր քայլերով
Գնաց դէպի տուն լեռան լանջերով։
Նա և՛ ուրախ էր, և՛ յուսահատուած,
Ե՛ւ երջանիկ էր, և՛ դժբաղդացած։
Թէպէտ գարշելի կինն էլ չըկար,
Թէպէտ այժմ նա ազատ էր իսպառ,
Բայց, կարծես, կնոջ պատկերն ահեղ
Միշտ հալածում էր նորան ամեն տեղ.
Եւ ահըռելի անդունդից խաւար,
Կարծես, անէջք էր հնչում անդադար.
Կարծես, բացուել էր նորա գաղտնիքը,
Եւ լսւում մարդկանց դատակնիքը։

ԺԴ

Բայց ոչ... բոլորը զուր ցնորքներ են՝—
Այլանդակ կինը մեռած է արդէն,
Իսկ մութ գաղտնիքը նորա հետ միասին
Թաղուած է արդէն անդնդում խորին...
Եւ շինականը իրան սիրտ տալով
Հանդարտ գնում՝ էր լեռան լանջերով։
Եւ նորա առաջ բացուեցաւ յանկարծ
Ծանօթ անդունդը ցիներով լցուած...
Գիշատիչները ճիչ ու աղմուկով
Ցած էին իջնում ագահութիւնով,
Կնոջ դիակը կոցում, պատառում.
Գարշահոտ, նեխուած, միսը քայքայում...

ԺԵ

Ամառուան կիզիչ արևը պայծառ

Կըրակ էր թափում վերևից աշխարհ,
Սարեր ու քարեր այրում, շիկացնում,
Ծառերի կատար խանձում, տոչորում.
Հորացել էին կանաչ արտերը,
Այրուել ու դեղնել դաշտի խոտերը՝
Եւ արևակէզ հովիտի միջին
Էլ ծաղիկ չը կար—չորացել էին.
Էլ ամայացած լեռների լանջում
Ինութեան որդու սրինգը չէր հնչում;
Ցամաքել էին պաղ աղբիւրները,
Իսպառ չորացել գետի ջրերը։

ԺԶ

Եւ ամբողջ գիւղը մեծ սգի մէջ էր.
Թէ այր, և թէ կին, թէ մանուկ, թէ ծեր՝
Ուժասպառ, անջուր, թուլացած տապից,
Պապակւում էին անզուսպ ծարաւից.
Անասունները ծարաւ, նիհարած՝
Կոտրւում էին քաղցած ու սոված.
Գիւղացիները հեկեկում էին,
Խաչով խաչվառով աղօթում Տէրին,
Որ վերից ղրկի անձրևներ առատ,
Չը թողնի գիւղը անճար, յուսահատ,
Որ գոնէ գետը նորից հոսեցնի,
Արտեր ու դաշտեր նորից աճեցնի։

ԺԷ

Բայց ունկնդիր չէր Աստուած բնաւին
Տառապողների լաց ու աղօթքին.—
Արևը վերից դարձեալ այրում էր,
Այրում, տոչորում լեռներ ու դաշտեր։
Ախ, գոնէ գետը, գոնէ գետը գար,
Գիւղին նոր հոգի, կենդանութիւն տար!..
Բայց գետը բնաւ չի կարող հոսել—
Նորա ակունքում հրէշն է նստել.

Հսկայ լեռան պէս գետի առաջին
Նստած է հուժկու հրէշն ահագին
Եւ ագահութեամբ ջրերը խմում,
Խմում է, խմում, բայց չի կշտանում...

ԺԸ

Եւ ով է կարող է հրէշին հալածել,
Գետի ակունքից նորան հեռացնել?
Ո՞վ կը յանդգնի՝ դիւցազնի նման՝
Անվախ, աներկիւղ մերձենալ նորան?
Մարդկային ազգի հզօր թշնամուն
Կարող է յաղթել թոյլ մահկանացուն?
Եւ ով է կարող իր հասուն մտքով,
Իր իմաստութեամբ, իր հնարքներով
Խեղճ ժողովրդին չարիքից փրկել
Ու նորա դառն արցունքը սրբել?
Ոչ ոք! դեռ մարդիկ անզօր են, տկար,
Իսկ նոցա միտքը տհաս ու խաւար։

ԺԹ

Բայց տե՛ս մեր հիւծուած հէգ շինականին,
Որ կնոջ ձգեց անդունդը մթին.—
Նա խորհրդաւոր հայեացքով կանգնած,
Թշուառ ամբոխին շուրջը ժողոված՝
Քաջալերում է, նորան խրախուսում,
Ամենքի առաջ տալիս մեծ խոստում,
Որ այն ահաւոր հրէշին խորտակի,
Հէգ ժողովրդին չարիքից փրկի։
Ամբոխը՝ երկբայ ու թերահաւատ՝
Լսում է նորան տխուր, յուսահատ,
Բուռը կասկածով գլուխը շարժում
Ու ծաղրում նորա յանդուգն խոստում։

Ի

Եւ նա ցամաքած գետի եզերքով

Գնաց դէպի վեր զգոյշ քայլերով։
Արևը դարձեալ կըրակ էր թափում.
Իսկ հրէշը դարձեալ գետի ակունքում
Անընդհատ նստած՝ իբրև հսկայ լեռ՝
Ջրի առաջը կտրել էր իսպառ։
Մեր շինականը երբ տեսաւ հեռուից,
Քարափի եռև թագ կացաւ ահից...
Օ, Հայոց Մուզա, տուր ինձ լրջութիւն
Շարունակելու!.. Ցուր ինձ զօրութիւն
Առանց ծիծաղի բանաստեղծելու
Ու պօէմայիս վերջը պատմելու!..

ԻԱ

Գիւղացին ինքը սիրտ տուաւ իրան,
Բարձրացաւ, կանգնեց քարափի վերան.
Խաչակնքելով նայեց հըրէշին,
Սկըսեց գոչել նա ձայնով ուժգին.
«Դէ, փախի՛ր դու հրէշ! դէ, շուտով փախի՛ր,
Դեռ քանի վաղ է, կեանքդ ազատեր!
Շուտ փախի՛ր, թէ չէ բուրդ է քո բանը—
Անզգամ կինը, այն անպիտանը,
Անդունդի խորքից արդէն դուրս եկած,
Քե՛զ է որոնում կատաղած, մոլեգնած.
Նա ատամները կրճատցնելով՝
Ահա գալիս է գետի եզերքով!..»

ԻԲ

Հրէշը զարհուրած վեր թռաւ տեղից,
Իսկոյն չքացաւ գետի ակունքից.
Նա լեղապատառ սլացաւ լեռը,
Բարձրացաւ նորա ամպոտ կատարը.
Եւ վերջին անգամ նայեց իր չորս դին,
Ահարկու ձայնով գոչեց դառնագին.
«Քանի որ կինը եկաւ լոյս աշխարհ,
Իմ բանըն արդէն վերջացա՜ւ իսպառ.

Մենք երբէք երկու հոգով միասին
Չենք կարող ապրել երկրի երեսին.
Կամ նա՛ պիտ լինի, կամ ես պիտ լինեմ,
Քանի որ նա կայ—ես աւելորդ եմ!...»

ԻԳ

Հրէշն ահարեկ և յուսահատուած՝
Լեռան կատարից նետեց իրան ցած,
Զարկուեց ժայռերին նա թաւագլոր,
Զարդուած, ջախջախուած՝ ընկաւ խորը ձոր,
Արիւնաշաղախ մռնչաց ուժգին,
Աչքերը փակեց, աւանդեց հոգին...
Եւ յանկարծ հեռուից, սգաւոր գիւղից,
Լսուեցան ուրախ ձայներ. հրճուալից.—
Ժողովուրդն էր ցնծում ու խնդում,
Գետի լիառատ ջրերն օրհնում.
Եւ ազատարար մեր շինականին
Գիւղը ձօնում էր մաղթանք սրտագին...

ԻԴ

Գործած յանցանքը մեր շինականին
Առաջ տանջում էր, կեղեքում հոգին.
Իսկ այժմ, երբ նա անգունդում մեռած՝
Ագահ ցիներից արդէն գիշատուած՝
Կնոջ անունով հրէշին տապալեց
Ու խեղճ ամբոխին աղէտից փրկեց,—
Զգում էր իրան իսպառ բալդաւոր.
Այժմ հանգիստ էր, խաղաղ և անդորր։
Արած յանցանքը նա խոստովանուեց,
Ամբոխն էլ նորան ներեց և օրհնեց,
Անուանեց նորան խելօք, հնարագէտ...
Բաց բաւական է, դնենք վերջակէտ։

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ.